ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ 1948, № 2 *Общественные науки*

Ա. Մնացականյան

11-ՐԴ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ՓԱՌԱՊԱՆՄ ՈՒՂԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ 1918—1921 Թ. Թ.

I

Կովկասը հանդիսանում է Սովետական պետության զինված ուժերի ամենանշանավոր միավորումներից մեկի՝ 11-րդ Կարմիր Բանակի ծննդավայրը և նրա մղած հերոսական մարտերի արենան։

11-րդ բանակն ստեղծվեց 1918 թ. ամռանը, սովետական իշխանության ամենածանր օրերին։ Այդ բանակը կազմակերպեցին Ռ. Վ. Ստալինը, Գ. Կ. Օրջոնիկիձեն, Ս. Մ. Կիրովը։

Ցարիցինում գտնված ժամանակ, ընկեր Ստալինը 1918 թ. հունիսին մոտիկից ծանոթացավ Հյուսիսային Կովկասում ստեղծված իրադրությանը։ Հյուսիսային Կովկասում գտնվող կարմիր-գվարդիական զորքը, բանվորները, գյուղացիները մահու և կենաց պայքար էին մղում սպիտակ-գվարդիական ուժերի դեմ։ Ընկեր Ստալինը Ցարիցինից պահանջում է թարմ զորքեր և զինամթերք ուղարկել Հյուսիսային Կովկաս, ամեն բանով օգնել Հյուսիսային Կովկասում սովետական իշխանության համար կռվող հերոս մարտիկներին։ Հյուսիսային Կովկասում կռվող այդ ջոկատներից էլ ձևավորվեց 11-րդ Կարմիր Բանակը, որն սկզբում կոչվում էր Հյուսիսային Կովկասի բանակ։ Այդ բանակի գլուխ կանգնած էր Լենինի-Ստալինի զինակից Գ. Կ. Օրջոնիկիձեն։

1918 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին այդ բանակի հիմնական ուժերը մարտեր էին մղում Ալեքսանդրովսկայա, Պյատիգորսկ, Վլադիկավկազ քաղաքների շրջանում։ Նոր կազմակերպվող Կարմիր Բանակի զորամասերի վրա գրոհում էին թշնամու հսկայական գերակշռություն ունեցող զորքերը բոլոր կողմերից։ Դենիկինի բանակները 1918 թ. աշնանը Նովորոսիյսկ և Տուապսե նավահանգիստների վրայով ստանում էին Անտանտի իմպերիալիստների ամեն տեսակի օգնություն։ Անգլո-ֆրանսիական իմպերիալիստները 1918 թ. աշնանը Դենիկինի բանակն ուղարկեցին իրենց զինվորական հրամանատարներին։

Անգլո-ֆրանսիական զորքերի հրամանատարությունը փաստորեն իր ձեռքը վերցրեց գենիկինյան այսպես կոչված «կամավորական բանակի» ղեկավարությունը։ Այդ բանակի գլխավոր ուժերը կենտրոնացված էին Արմավիրի Նովո-Դմիտրևսկոյի և Վոզնեսենսկայայի շրջաններում։ Այդ կետերից էլ սպիտակները հարձակման անցան 11-րդ բանակի դեմ, դեպի Թերեք։ 11-րդ Կարմիր Բանակի դեմ գրոհի անցան Կիսլովոդսկի ուղղությամբ՝ Շկուրոյի բանդաները, Պրոխլադնայայի ուղղությամբ՝ գնդապետ Սերեբրյակովի բանդաները, իսկ Մոզդոկից՝ Բիչերախովի հակառևոլուցիոն խռովարարները։

Սկսած 1918 թ. սեպտեմբերից մինչև 1919 թ. փետրվարը, 11-րդ Կարմիր Բանակը ծանր մարտեր մղեց բոլոր կողմերից հարձակվող սպիտակ բանակ-

ների դեմ։ Շատ քաղաքներ ու գյուղեր մի քանի անգամ ձեռքից-ձեռք էին անցնում։ Այդ կռիվների մեջ իրենց տոկունությամբ և անձնվիրությամբ կոմունիստները պրոլետարիատի գործի համար պայքարելու օրինակ էին տալիս։ Կարմիր մարտիկները կրում էին անասելի զրկանքներ, բայց տոկունությամբ հաղթահարում էին ամեն մի դժվարություն։

11-րդ Կարմիր Բանակի հետ ձեռք-ձեռքի տված կռվում էին Հյուսիսային Կովկասի բոլշևիկները։ Հատկապես Դաղստանի ռևոլուցիոն աշխատավորները ժողովրդական հերոս Մախաչի գլխավորությամբ հարված հարվածի հետևից էին հասցնում Բիչերախովի խռովարարներին։

1918 թ. սեպտեմբերին քաջարի Մախաչը մի ուլտիմատում-նամակ է ուղարկում Բիչերախովին։ Այդ նամակի մեջ Մախաչը Բիչերախովից պահանջում էր, որ նա անմիջապես անգլիական իմպերիալիստների փողով կերակրվող սպիտակ զորքը հեռացնի Դաղստանից, հակառակ դեպքում Դաղստանի լեռնային արծիվները զենքով արժանի պատասխան կտան «Բիչերախովի բանդաներին»։

Մախաչը հանդիսանում էր Կարմիր Բանակի ստորաբաժանումների ղեկավարներից մեկը և Դաղստանի ժողովրդական հերոսը։ Թշնամու ստոր գործակալները դավադրաբար սպանեցին Մախաչին՝ անվեհեր ռևոլուցիոներին և հերոսին։

Հակառևոլուցիոն բանդաները նոր ուժով գրոհի են նետվում կարմիր զորքերի դեմ նաև Դաղստանից։ 11-րդ Կարմիր Բանակի վիճակն ավելի է ծանրանում։ 1918 թ. դեկտեմբերին Ղզլարից սովետական զորքի հրամանատարներից մեկը հաղորդում է Աստրախան, 11-րդ բանակի մասին.

«Հենց հիմա ուղիղ գծով խոսեցի Օրջոնիկիձեի հետ։

Հայտնում է, որ 11-րդ բանակի դրությունը ծանր է, ավելի քան 60 հազար զինվոր հիվանդ են բծավոր տիֆով։ Գրեթե չկան միջոցներ և փամփուշտներ... հավանական է այսօր կամ վաղը կթողնեն Մինեբալնին։ Խնդրում ենք օգնել հագուստեղենով, փամփուշտներով, արկերով։ Մենք որևէ բան տալ չենք կարող, իսկ եթե տանք էլ, շատ քիչ արկեր և փամփուշտներ։ Պետք է արագ և շատ օգնություն Աստրախանից... վաղը մեր ներկայացուցիչը մեկնում է 11-րդ բանակի շտաբը, յուրաքանչյուր 6 ժամից հետո ինֆորմացիա տալու համար... Օրջոնիկիձեն վաղը Վլադիկավկազից մեկնում է 11-րդ բանակի շտաբը։»[2]

Բայց օգնությունն ուշանում է։ Կասպիական-Կովկասյան ճակատի շտաբում նստած դավաճանները ոչ միայն օգնություն ցույց չտվին 11-րդ բանակին, այլև հափշտակեցին կենտրոնից այդ բանակին ուղարկված զինամթերքը և հագուստը։ 1918 թ. դեկտեմբերի 1-ին, 11-րդ բանակի կազմում հաշվվում էր մոտ 150 հազար մարդ, որից 80 հազարը գտնվում էր ճակատում՝ մարտերի մեջ։ Այդ ժամանակ մոտ 40 հազար զինվոր վիրավոր կամ հիվանդ գտնվում էր բուժման մեջ։»[3]

1919 թ. հունվարին 11-րդ բանակը Աստրախանից ստացավ 5901 շինել, 5044 պոլուշուբկա, 26,272 զույգ բոտինկաներ։

[1] Проф. И. Разгон. А. Мельчин.—Борьба за власть Советов в Дагестане. (1917—1921 г. г.) Даггиз. 1945 г. Махачкала, стр. 55—56

[2] Центр. архив Красной Армии, д. 78324, л. 13.

[3] Там же, д. 50-980, л. 31.

Բանակը վերակազմվեց, անմարտունակ զորամասերը վերացվեցին, կազմվեցին նոր դիվիզիաներ, կարգի բերվեցին զորամասերը և ստորաբաժանումները, ուժեղացվեց քաղաքական, դաստիարակչական աշխատանքը։

1919 թ. հունվարի 2-ին 11-րդ Կարմիր Բանակն ամբողջ ճակատով անցնում է հարձակման։ Մինչև հունվարի 24-ը բանակի զորամասերը հարձակողական մարտեր էին մղում թշնամու դեմ. բայց 11-րդ Կարմիր Բանակը ոչ մի օգնություն չէր ստանում իր հարձակումը շարունակելու համար։ Սովետական Ռուսաստանի հետ կապը կտրված էր։ Անդրկովկասում իշխում էին բուրժուա-նացիոնալիստական հակաժողովրդական կառավարությունները և օտարերկրյա իմպերիալիստները։ 11-րդ բանակը գործում էր Թերեքի մարզի սովետական շրջաններում, լիակատար շրջապատման մեջ։ Կասպիական-Կովկասյան ճակատի Ռեվվոենսովետում նստած տրոցկիստ Շլյապնիկովը և իր գործակիցները ոչ մի միջոցի առաջ կանգ չէին առնում 11-րդ Կարմիր Բանակի գործողություններին արգելքներ ստեղծելու և նրան կործանելու համար։ 1919 թ. հունվարի 5-ին կենտրոնից 11-րդ բանակին ուղարկված 3 միլիոն փամփուշտը և 8 հազար արկը դավաճանները դցեցին թշնամու ձեռքը։ 11-րդ բանակի զորամասերը մնացին առանց զինամթերքի։

11-րդ Կարմիր Բանակի դեմ նոր հարձակման անցան սպիտակները բոլոր կողմերից։ 1919 թ. հունվարին Դենիկինը գրավեց Մինեբալնիե վոդի, Պյատիգորսկ, Կիսլովոդսկ քաղաքները։ Կարմիր բանակը հակառակորդի գերակշռող ուժերի ճնշման տակ սկսեց նահանջել։ Թերեքի մարզի սովետական ռեսպուբլիկան գտնվում էր վտանգի տակ։ Սերգո Օրջոնիկիձեն 1918 թ. դեկտեմբերին և 1919 թ. հունվարին Հյուսիսային Կովկասի մի հատվածից մյուսն էր անցնում, հանդես էր գալիս զինվորների մեջ, շտաբներում, կազմակերպչական հսկայական աշխատանք էր կատարում զորամասերի մարտունակությունը բարձրացնելու, նրանց դիմադրական ուժը ավելացնելու համար։ Օրջոնիկիձեն Վլադիկավկազում կազմակերպեց կարմիր հրամանատարների դպրոց, Գիորգևսկ, Պյատիգորսկ, Նարզան քաղաքներում հավաքեց լեռնականների միտինգներ, ուր ճառերով հանդես եկավ և կոչ արեց ետ մղել թշնամուն, պաշտպանել սովետական կարգերը։

11-րդ բանակը հաղթահարելով բազմաթիվ դժվարություններ, հերոսաբար կռվում էր Դենիկինի բանակների դեմ։

Հյուսիսային Կովկասում 11-րդ Կարմիր բանակի կատարած դերը ավելի ակնառու կլինի, եթե հիշատակենք այն փաստը, որ, Դենիկինի խոստման համաձայն, 11-րդ բանակը միայն 1918 թ. ամառը և աշնանը ոչնչացրել է դենիկինյան բանակի 30 հազար զինվոր, երկու սպայական ընտիր գունդ։[1]

Բայց Դենիկինը 1919 թ. հունվարին 11-րդ բանակի դեմ նետեց նոր ուժեր։ Հունվարի 25-ին գենիկինյանները գրավեցին Նալչիկը։ Հունվարի 27-ին 11-րդ բանակի հոգնած, սոված, ուժասպառ եղած զորամասերը նահանջեցին դեպի Մոզդոկ։ Հունվարի վերջերին Դենիկինի զորամասերը Շկուրոյի գլխավորությամբ հարձակվեցին Վլադիկավկազի վրա։ Օսեթական քաղաքը պաշտպանում էին 11-րդ բանակի զորամասերը և բանվորական գումարտակները։ 7 օր կատաղի կռիվներ մղվեցին Վլադիկավկազի շրջանում. Կարմիր հրամա-

[1] Տես ընկ. Օրջոնիկիձեի գեկուցումը ՌՍՖՍՌ ի ժողկոմսովետի նիստում. 1918 թ. հուլիսի 10-ին։

նատարների դպրոցի ուսանողները կռվում էին մինչև վերջին հնարավորությունը և ընկնում, բայց չէին նահանջում։ 180 ուսանողներից 131-ը հերոսաբար կռվեցին և ընկան քաղաքը պաշտպանելիս։

Շկուրոյի բանդաները գազազելով, ավելի կատաղորեն էին գրոհում 11-րդ բանակի դեմ։ 11-րդ բանակը հարկադրված եղավ նահանջել։ Նրա առրամասերը շարժվում էին դեպի Աստրախան։ Նրանց մեջ առավել մարտունակ էր մնացել Իվան Կոշուբեյի գլխավորած զորամասը։ Բայց նահանջի ուղին ևս հեշտ չէր։ Տիֆը մի կողմից, սովը մյուս կողմից բոլորովին քայքայել էին 11-րդ բանակի զորամասերը։ Ռեվվոենսովետի գլուխ կանգնած տրոցկիստ Շլյապնիկովը նյութում էր ամեն տեսակի ինտրիգներ և դավեր՝ 11-րդ բանակը վերջնականապես կազմալուծելու և ցրելու համար։

Ընկեր Օրջոնիկիձեն Ժողկոմսովետի նիստում տված իր զեկուցման մեջ այդ մասին ասում է.

«Ես հայտարարում եմ,— դրա համար ինձ մոտ կան փաստաթղթեր և տվյալներ,— որ այն հանդերձանքից և զենքից, որն Աստրախանից պետք է ուղարկվեր 11-րդ բանակին, մի մասը շոգենավերից Կովկասյան-կասպիական ճակատի Ռեվվոենսովետի ծառայողները ուղղակի կայարանից կամ շոգենավերից ուղարկել են մասնավոր բնակարանները, իսկ մյուս մասը հափշտակել են պահեստներից»։

11-րդ բանակի զորամասերը ծանր կորուստներ կրելով, մի կողմից թշնամու գերակշռող ուժերի կատաղի ճնշման և մյուս կողմից էլ Կովկասյան-կասպիական Ռեվվոենկոմատում նստած դավաճանների քայքայիչ գործունեության հետևանքով, թողեցին Հյուսիսային Կովկաս և Կալմիկյան տափաստաններով նահանջեցին Աստրախան։ Հյուսիսային Կովկասում դենիկինյան բանդաները շարունակում էին իրենց սև ոճրագործությունները։

II

1919 թ. հունվարի վերջերին և փետրվարին 11-րդ Կարմիր Բանակի զորամասերի մնացորդներն ամբողջովին կենտրոնացան Աստրախանում։ 11-րդ բանակի Ռեվվոենսովետի անդամ նշանակվեց Ս. Մ. Կիրովը, որը ընդունեց բանակը և ամբողջ եռանդով լծվեց նրա կազմակերպմանը, զինմանը, նրա զորամասերը մարտունակ դարձնելու մեծ գործին։

Այստեղից սկսվում է 11-րդ Կարմիր Բանակի կյանքի մի նոր էտապը։ Ս. Մ. Կիրովը հանդիսանում է բանակի ոգին։ Նա իր հզոր կամքով և վճռականությամբ ջախջախում է տրոցկիստական կապիտուլանտներին։

Կիրովը երեք խնդիր է ստանում.

Առաջին՝ 11-րդ բանակի ռևոլուցիոն մարտիկներից վերստեղծել նոր, ամուր համախմբված, լավ կազմակերպված բանակ, և նորից անցնել հարձակման, մաքրել Հյուսիսային Կովկասը Դենիկինից։

Երկրորդ՝ Աստրախանում հաստատել ռևոլուցիոն կարգ ու կանոն և ինչ գնով ուզում է լինի պահպանել Աստրախանը որպես ամենից ավելի հարմար կետ բանակի վերակազմավորման համար, որպես ռևոլուցիայի հենման կետ,

[1] С. М. Киров. Избранные статьи и речи. Огиз, 1939 г., стр. 41.
[2] Г. К. Орджоникидзе. Избранные статьи и речи. Огиз 1939 г., стр. 71—73.

որը պաշտպանում է Վոլգայի գետաբերանը սպիտակ գվարդիականներից և Կոլչակին ու Դենիկինին հնարավորություն չի տալիս միավորել իրենց ուժերն ու ստեղծել հակառևոլուցիայի միասնական ճակատ։

Երրորդ՝ ապահովել կապի պահպանումը, ղեկավարությունն ու օգնությունը Անդրկովկասում և Հյուսիսային Կովկասում՝ ընդհատակում աշխատող կոմունիստների հետ, ինչպես և Դաղստանում ու Թերեքում Դենիկինի թիկունքում գործող կարմիր պարտիզանական ջոկատների հետ։[1]

Այդ խնդիրները նա կատարեց փայլուն կերպով։ 11-րդ բանակը օրը-օրին համախմբվում և առնականանում էր 1919 թվականի սկզբներից։ Այդ բանակի կյանքում փոքր դեր չկատարեց „Красный Воин" թերթը, որի փաստացի ղեկավարը Կիրովն էր։ Աստրախանում հրատարակվող „Красный Воин" թերթի 1919 թ. գարնան և ամառվա ամիսներին լույս տեսած համարներում կարդում ենք հետևյալ վերնագրերը—„Бей врага до последней капли крови!", „Вперед за свободу!", „Не выпустим винтовки из рук!", „Прочь с дороги, бандиты!", „Смерть Колчаку!"[2]

Այդ մարտական լոզունգների ոգով էլ տոգորված էին 11-րդ բանակի զինվորները։ 1919 թ. գարնանը և ամառը նրանք պաշտպանում էին Աստրախանի շրջանը, Վոլգայի գետաբերանը և պատրաստվում հարձակողական մարտերի։

1919 թ. օգոստոս—հոկտեմբեր ամիսներին 11-րդ բանակը հարձակման էր նախապատրաստվում Ցարիցինը և Հյուսիսային Կովկասը սպիտակ-գվարդիականներից ազատագրելու և այնուհետև շարժվելու համար դեպի Անդրկովկաս։ 11-րդ բանակի այդ նախապատրաստական ամբողջ աշխատանքը կատարվում էր Ս. Մ. Կիրովի և Վ. Վ. Կույբիշևի ղեկավարությամբ, Աստրախան քաղաքում։ Բայց մինչև այդ խնդրի կատարմանն անցնելը, 11-րդ բանակը պետք է ջախջախեր Աստրախանը շրջապատած սպիտակ գեներալներ Տոլստոյի, Պոկրովսկու և Ուլագայի զորքերը և ուղի հարթեր իր հարձակման համար։ Հենց այդ օրերին էր, որ Տրոցկին, որպես 11-րդ բանակի շտաբի պետ ուղարկեց ցարական նախկին գեներալ Լյունգենկվիստին։ Շուտով պարզվեց, որ Լյունգենկվիստը սովետական իշխանության թշնամին է։ Նա Պետրոգրադում դավադրություն կազմակերպողներից մեկն է եղել, որոնք նպատակ են ունեցել քաղաքը հանձնել Յուդենիչին։ Տրոցկու կարգած այդ բանդիտը չհասավ 11-րդ բանակի շտաբի պետի պոստը. նա դիմակազերծ արվեց և գնդակահարվեց։

Երբ Հարավային ռազմաճակատում Կարմիր Բանակն անցավ գլխավոր հարձակման, Դենիկինի ջախջախման ստալինյան պլանը կենսագործելու համար, հարավային ճակատի զորքերի հետ միաժամանակ հարձակման անցավ նաև 11-րդ բանակը։ Գրոհելով սպիտակ կազակների դիրքերի վրա, 11-րդ բանակի զորամասերը ջախջախեցին հակառակորդին և վերացրին Աստրախանի գլխին կախված վտանգը։ 1919 թ. դեկտեմբերի 1-ին Ս. Մ. Կիրովը հաղորդում է Մոսկվա, Պարտիայի Կենտկոմին և Լենինին 11-րդ բանակի հարձակման փայլուն արդյունքների մասին։[3] Այդ հաջողություններով ոգևորված մարտիկներն ավելի եռանդով էին գործում։

[1] С. М. Киров. Избр. статьи и речи, стр. 41 - 42.
[2] См. в Архиве Зав. окр. газеты „Боец РККА" Компл. „Красного Воина".
[3] С. М. Киров. Статьи, речи и документы, стр. 150—151. Партиздат, 1938 г.

Հարավային ճակատի զորքերը մեծ հաղթանակներ էին տանում։ Ազատելով Օրյոլը, Սովետական զորքերն Ստալինյան պլանով առաջ էին շարժվում և փախուստի մատնում Դենիկինի բանակները։ Կուրսկի, Խարկովի ազատագրումից հետո Կարմիր Բանակը պայքար ծավալեց Donբասի ազատագրման համար։

1920 թ. առաջին օրերից 10-րդ բանակը հարձակվեց Ցարիցինի վրա։ Նրան օգնության հասան 11-րդ բանակի զորամասերը։ Երկու կողմից ճնշելով սպիտակներին, 10-րդ և 11-րդ բանակները հունվարի 3-ին ազատագրեցին Ցարիցինը, հերոսական քաղաքը։ Հունվարի 8-ին Հեծյալ բանակը մտավ Դոնի Ռոստովը և ազատագրեց քաղաքը։ Դենիկինի բանակի մնացորդները փախան Հյուսիսային Կովկաս։

III

11-րդ բանակի զորքերը Լենինի և Ստալինի ցուցումներով 1920 թ. սկզբներից վճռական հարձակման անցան Հյուսիսային Կովկասի ուղղությամբ, սպիտակներին ջախջախելու, տեղական կարմիր պարտիզաններին օգնելու և Հյուսիսային Կովկասում Սովետական իշխանությունը վերականգնելու համար։ 11-րդ բանակի գործողությունները ղեկավարում էին Օրջոնիկիձեն և Կիրովը։

Հյուսիսային Կովկասում դեռևս 1920 թ. հունվարի 21-ին ստեղծվեց Թերեքի մարզի կարմիր ապստամբ զորքերի խումբ։ Նշանակվեցին այդ խմբի շտաբի ղեկավարներ, որոնք կապ էին պահպանում 11-րդ բանակի հրամանատարության հետ և գործում էին նրա ցուցումներով։

Լեռնական աշխատավոր ժողովուրդները համախմբվում էին տեղական բոլշևիկյան կազմակերպությունների շուրջը և պատրաստվում զինված ապրստամբության դենիկինշչինայի դեմ։ Հատկապես Դաղստանում կարմիր պարտիզանները 7 ամիս մարտեր էին մղում դենիկինցիների դեմ և Դերբենդի կայազորը պահում սարսափի մեջ։ Դաղստանի բոլշևիկները կապ էին պահպանում Բաքվի բոլշևիկյան կոմիտեի հետ և օգնություն ստանում նրանից։

1920 թ. մարտին 11-րդ Կարմիր Բանակն անցավ ընդհանուր հարձակման։ Ստորաբաժանումները գնում էին այն դաշտերով, ճանապարհներով, աուլներով, որտեղից մեկ տարի առաջ նահանջել էին, որտեղ գերեզման էին փորել իրենց զոհված մարտական ընկերների համար։ Ստավրոպոլն ազատագրելուց հետո 11-րդ բանակի զորամասերը շարժվեցին դեպի Ղզլար—Գրոզնի։ Մարտի 17-ին պարտիզանների հեծելակային զորամասը գրոհեց Գրոզնու վրա և գրավեց քաղաքը։ Ընկ. Ս. Մ. Կիրովը 11-րդ բանակի հրամանատարության անունից առաջարկում է պարտիզաններին հետապնդել սպիտակներին։ Մարտի 22-ին սպիտակները ջախջախվեցին նաև Վլադիկավկազում։ Մարտի 31-ին Օրջոնիկիձեն և Կիրովը եկան Վլադիկավկազ։ Ստեղծվեց Հյուսիսային Կովկասի Ռևկոմ։ Ապրիլի 2-ին Ռևկոմը ժամանեց ազատագրված Գրոզնի։ 11-րդ բանակի զորամասերը լեռներից ցած իջան, կարմիր պարտիզանների հետ միասին գրոհեցին Պետրովսկ քաղաքի վրա, Դենիկինի բանակի՝ Դաղստանում ծվարած մնացորդներին նետեցին Կասպից ծովը. Դաղստանը լիովին ազատագրվեց սպիտակներից։

Ընկեր Օրջոնիկիձեն Գրոզնուց Լենինին հեռագիր է ուղարկել, որով հա-

զորդում է Դաղստանում սովետական իշխանություն հաստատելու մասին, ինչպես և այն կարևոր դերի մասին, որ խաղացին 11-րդ բանակի զորամասերն ու Դաղստանի կարմիր պարտիզանները[1]

Ընկեր Օրջոնիկիձեն և ընկ. Կիրովը Կարմիր Բանակի անունից հատուկ հրաման են հրատարակում՝ ուղղված Դաղստանի ժողովուրդներին։ Այդ հրամանում ասված է.

«Հաղթական կարմիր բանակի անունից մենք ողջունում ենք Ձեզ, փառապանծ Դաղստանի լեռնային զավակներ։ Այն ծանր շղթաները, որոնցով Ձեզ կաշկանդել էին աշխատավոր ժողովրդի թշնամիները, ընդմիշտ փշրված են, և Սովետական Ռուսաստանը երբեք չի մոռանա այն հերոսական պայքարը, որ երկար ամիսների ընթացքում դուք կրեցիք Ձեր ուժասպառ եղած ուսերին... հիշեցեք, դաղստանցիներ, որ սովետական իշխանությունը և Կարմիր Բանակը գալիս են միայն նրա համար, որ ճնշված ժողովուրդներին ազատագրեն շահագործումից... սովետական իշխանությունը ձեր ժողովուրդներին կտա ինքնորոշման լիակատար իրավունք։ Շնորհավորում ենք ձեզ, Դաղստանի հարազատ զավակներ, ձեր երկիրը դենիկինյաններից մաքրելու առթիվ... Սովետական Ռուսաստանն այսուհետև ազատ է բոլոր թշնամիներից։ Սովետական իշխանության թշնամիները ոչնչացված են Հյուսիսային Կովկասում և Դաղստանում։

Կեցցե հաղթական Կարմիր Բանակը։

Կեցցե ազատ Դաղստանը և ռևոլուցիայի գործի համար նրա անձնազոհ մարտնչողները։

Կեցցե Սովետական Ռուսաստանը, որն ազատագրում է ճնշված ժողովուրդներին։

Ճակատի Ռեվոենսովետի անդամ և Հյուս. Կովկ. Ռևկոմի Նախագահ Ս. Օրջոնիկիձե.

11-րդ բանակի Ռևվոենսովետի անդամ և Հյուս. Կովկ. Ռևկոմի անդամ Ս. Կիրով»։[2]

Այսպիսով 11-րդ Կարմիր Բանակը փառապանծ ուղի անցավ Աստրախանից Ստավրոպոլի և Հյուսիսային Կովկասի տափաստաններով, հաջողությամբ կատարեց իր ազատագրական միսիան և ջախջախելով Դենիկինի սպիտակ բանդաներին, լիովին ազատագրեց Հյուսիսային Կովկասի ժողովուրդներին ճնշումից ու շահագործումից։ Հյուսիսային Կովկասի գյուղերի և քաղաքների վրա 1920 թ. սկզբներին արդեն վեհորեն ծածանվում էր ժողովրդի իշխանության դրոշը, սովետների դրոշը։

IV

1920 թվի գարնանը, երբ 11-րդ Կարմիր Բանակի զորքերը լիովին ազատագրեցին Հյուսիսային Կովկասը և ամբողջ ճակատով մոտեցան Անդրկովկասի սահմաններին, Անդրկովկասում արդեն երեք տարի էր ինչ իշխում էին բուրժուա-նացիոնալիստական մենշևիկյան, դաշնակցական և մուսավաթիս-

[1] Газета „Дагестанская Правда", № 250, ст. 28 окт. 1936 г. Махач-Кала.
[2] Газета „Правда", № 172, от. 24 июня, 1935 г. Москва.

տական պարտիաները՝ օտարերկրյա իմպերիալիստների թելադրանքով և օգնությամբ։

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Ռևոլուցիայի հաղթանակը Ռուսաստանում՝ ոտքի հանեց նաև Անդրկովկասի ռևոլուցիոն բանվորներին ու գյուղացիներին։ Պետրոգրադում իշխանությունը ժողովրդական կոմիսարների Սովետի ձեռքն անցնելուց անմիջապես հետո Հայաստանի, Ադրբեջանի, Վրաստանի ռևոլուցիոն բանվորներն ու գյուղացիները ցնծությամբ ողջունեցին Լենինի և Ստալինի գլխավորած ժողկոմսովետը։ Անդրկովկասի շատ քաղաքներում ու շրջաններում ստեղծվեցին ռևկոմներ, տեղական իշխանության օրգաններն արձակված հայտարարվեցին։ Անդրկովկասում ստեղծվել էին անհրաժեշտ պայմաններ՝ սոցիալիստական ռևոլուցիայի հաղթանակի և սովետական իշխանության հաստատման համար։

Վախենալով բանվորների և գյուղացիների ռևոլուցիոն շարժման վերելքից, անդրկովկասյան երկրների ազգային բուրժուազիան և կեղծ սոցիալիստները բլոկ կազմեցին ընդդեմ ռևոլուցիայի։ Նախ Անդրկովկասյան կոմիսարիատը, հետո վրացական մենշևիկյան, հայկական դաշնակցական և ադրբեջանական մուսավաթական կառավարությունները դարձան իմպերիալիստական ինտերվենտների հենարանները։ Անդրկովկաս էին գալիս գերմանա-թյուրքական օկուպանտները, անգլո-ֆրանսիական զավթիչները, ամերիկյան գաղութարարները. նրանցից ամեն մեկը «բարեկամական» ծառայություններ մատուցելով բուրժուական կառավարություններին, նրանց հետ միասին գազանաբար գնդակահարում էր Անդրկովկասի ռևոլուցիոն բանվորներին ու գյուղացիներին, արյան մեջ խեղդում ռևոլուցիոն մասսաներին, երկրում հաստատում գաղութային տեռորիստական ռեժիմ։

Բայց ազգային բուրժուական կառավարությունների և նրանց իմպերիալիստական գիշատիչ տերերի տեռորը չկարողացավ ընկճել Անդրկովկասի պրոլետարիատի և աշխատավոր գյուղացիության ռևոլուցիոն կամքը, որը նրանց մեջ կոփել ու դաստիարակել էր բոլշևիկների պարտիան։ Իմպերիալիստական օկուպանտները և նրանց գործակալները դարձած բուրժուական կառավարությունները չկարողացան նաև խաբել Անդրկովկասի աշխատավորներին, «անկախության» խաբուսիկ խոստումներով։ Անդրկովկասի ժողովուրդները չէին ուզում անջատվել Ռուսաստանից, ռուս մեծ ժողովրդից։ Նրանք ռուսական պրոլետարիատի օրինակով դուրս եկան պայքարի հանուն սովետական կարգերի հաստատման Անդրկովկասում։

Դեռևս 1919 թ. փետրվարին ընկ. Ա. Ի. Միկոյանին հաջողվում է ազատվել բանտից և անցնել Բաքվի բոլշևիկների գլուխը։ 1920 թ. փետրվարին տեղի ունեցավ Ադրբեջանի կոմպարտիայի 1-ին համագումարը, որը որոշեց զինված ապստամբություն կազմակերպել և տապալել մուսավաթական կառավարությունը։ Բաքվում նոր թափ ստացավ ռևոլուցիոն կազմակերպական աշխատանքը։

Ընկ. Միկոյանը կապ է պահպանում 11-րդ բանակի հրամանատարության հետ, ընկ. Օրջոնիկիձեի և ընկ. Կիրովի օգնությամբ նախապատրաստում է Բաքվի պրոլետարիատի զինված ելույթը մուսավաթիստ հակառևոլուցիոներների և անգլիական օկուպանտների դեմ։ 1919 թ. մարտի 20-ին Բաքվի բոլշևիկները կազմակերպում են միօրյա գործադուլ. անգլիական իմպերիալիստների ձեռքով 26 կոմունարների գազանային գնդակահարման վեց ամիսը

լրանալու առթիվ Ա. Ի. Միկոյանն այդ օրը Բաքվի պրոլետարներին դիմում է մի մարտական կոչով, որտեղ ասված է.

«Ընկերներ, այսօր մենք պետք է նշենք 1918 թ. սեպտեմբերի 20-ի պատմական օրը, նշենք զոհված ընկերների և առաջնորդների հիշատակը։ Այսօր ևեթ պետք է դադարեցնենք ամեն տեսակի աշխատանքը։ Ամբողջ օրը մենք պետք է նվիրենք մեծ մարտնչողների լուսավոր հիշատակին։ Ընկերներ, եկեք սրբազան խոսք տանք, նույնպիսի անձնազոհությամբ և նվիրվածությամբ փշոտ ճանապարհով շարունակենք այն պայքարը, որի մեջ հերոսաբար ընկան առաջնորդները և ընկերները։ Հավե՞ր հիշատակ ընկած մարտնչողներին»։ [1]

Բաքվի պրոլետարիատի ելույթները խորն արձագանք էին առաջ բերում Անդրկովկասի ամենահեռավոր անկյուններում։

1920 թ. մարտի 15-ին բոլշևիկների Կովկասյան Օրգբյուրոն կոմիտեն և ամբողջ Կովկասի աշխատավորների ներկայացուցիչները մի գիմում ուղարկեցին Համառուսական Կենտգործկոմին, Ժողկոմսովետին, Երրորդ Կոմունիստական Ինտերնացիոնալին և Կարմիր Բանակին։ Այդ պատմական նշանավոր փաստաթղթերի մեջ շարադրված է Կովկասի ժողովուրդների ռևոլյուցիոն կամքը և անխախտելի բարեկամությունը ռուս մեծ ժողովրդի հետ։ Այդ դիմումը անարգում է Ժորդանիայի, Ռասուլզադեի և Խատիսովի գլխավորած կառավարություններին, որպես Անտանտի լակեյների։ Կովկասի ժողովուրդների ներկայացուցիչները գրում են.

«Մենք, Կովկասի ժողովուրդների աշխատավոր մասսաներս, մեր եղբայրական ջերմ ողջույնն ենք հղում Ռուսաստանի պրոլետարիատին, գյուղացիությանը և Կարմիր Բանակին։ Ձեր հաղթանակները, թանկագին եղբայրներ և ընկերներ, քաղաքացիական պայքարի ճակատներում, ձեր կատարած անօրինակ հերոսությունն սխրագործությունները պատերազմի մարտերում և աշխատանքի դաշտերում, մեր սրտերը լցնում են առույգությամբ և հավատով նաև մեր հաղթանակի նկատմամբ...

Մենք բազմիցս և արյունալի գրոհներ ենք գործել մեր ղազբելի և կեղծավոր կառավարությունների վրա։ Մենք հերոսական ջանքեր ենք թափել մեր ստրկացված երկրամասն ազատագրելու համար անգլո-ֆրանսիական իմպերիալիզմի գիշակեր բորենիներից և ճաշկերույթներում, օրգիաներում ու այլասերվածության մեջ ապականված Ժորդանիայի, Ռասուլզադեի, Խատիսովի ծառայակամ կառավարություններից։ Կարմիր ճակատի ամենածանր ճգնաժամի պահին, երբ գեներալ Դենիկինի բանգաները Օրյոլից դուրս եկան Մոսկվա տանող ճանապարհը, մենք, ռևոլյուցիոն բնազդով զգալով ռևոլյուցիայի համար առաջացած մեծ վտանգը, մարտի նետվեցինք Վրաստանում... սպառնալիք ստեղծելով Դենիկինի թիկունքին, մենք օգնության նետվեցինք ձեզ... Մենք գիտեինք, որ ձեր պարտությունը մահ էր մեզ, բոլորիս համար, Հոկտեմբերյան Ռևոլյուցիայի մեր բոլոր մեծ նվաճումների համար, որ Սովետական Ռուսաստանի կատաստրոֆը կխորտակեր բոլոր երկրների բանվոր դասակարգի բոլոր իղձերն ու հույսերը։ Սակայն Կարմիր Բանակը մահացու հարված հասցնելով Դենիկինի սպիտակ բանակին, մոտեցավ Կովկասի սահմաններին։

[1] „Бакинский Рабочий" от 20 сентября 1920 г.

Մենք, Կովկասի բոլոր ժողովուրդների աշխատավոր մասսաներս, դիմումի սույն ակտով, միջազգային պրոլետարիատի առաջ հայտարարում ենք, որ մենք արհամարհում ենք «անկախության» լոզունգը, որ Կովկասի ազգաբնակության փոքրամասնության կողմից հռչակվել է մեր հարստահարողների և բռնադատիչների՝ Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի «կառավարությունների» շուրթերով։ Մենք գիտենք, որ այդ լոզունգով նրանք մի կողմից անկախություն են ուզում Սովետական Ռուսաստանից՝ կովկասյան կապիտալիստների, կալվածատերերի և պորտաբույծ կուլակների համար, իսկ մյուս կողմից, նրանք այդ եղանակով ուզում են կովկասյան աշխատավորական մասսան անջատել Ռուսաստանի բանվորներից ու գյուղացիներից, որպեսզի ավելի հեշտությամբ նրան ենթարկեն իրենց ու ընդմիշտ ստրկացնեն և, վերջապես, այդպիսի անկախության միջոցով նրանք աշխատում են փաստական կախումն ստեղծել Անգլիայի, Ֆրանսիայի ու Իտալիայի իմպերիալիստներից, ուզում են մեր տնտեսական ու քաղաքական լիակատար ստրկությունը։

Մենք չենք ուզում ստրուկ մնալ հատկապես այժմ, երբ մեր կողքին կանգնած է Ռուսաստանի ազատագրված պրոլետարիատը, որի հետ մենք ուզում ենք մտնել մեկ-միասնական պրոլետարական ինտերնացիոնալ ընտանիքի մեջ։

Մենք բոլորս, կովկասյան կոմունիստներս, մենք բոլորս, Վրաստանի, Ադրբեջանի, Հայաստանի և Դաղստանի բանվորներս ու գյուղացիներս, մենք, Կովկասի բոլոր ժողովուրդների աշխատավորական մասսաների ներկայացուցիչներս... անօրինակ ծանր պայմաններում երկու տարի շարունակ անհաշտ պայքար ենք մղում այն իդեալների համար, որ գուք ձեռք եք բերել Հոկտեմբերյան ռևոլուցիայի շնորհիվ։

... Մեզ դեռ չի լուսավորել Հոկտեմբերյան ռևոլուցիայի մեծ արևը, որ զենիթից փայլում է մեզ վրա։

Մեր ընկերները, եղբայրները և զավակները դեռ շարունակում են առաջվա նման փտել ու տանջվել ցարական հին զնդաններում։

Մեզ վիճակված չէր լիաթոք ազատ շունչ քաշել գարերի արյունոտ ռեժիմի տապալումից հետո։

Այդ ռեժիմը փոխարինվեց բանվորա-գյուղացիական Վրաստանի դահիճ Նոյ Ռամիշվիլու, գազանացած Ուսուբեկովի և անհոգի Խատիսովի էլ ավելի գառն ռեժիմով, իսկ Հյուսիսային Կովկասում արդեն շառաչում էր ցարական գեներալների կապարի նման ծանր մտրակը։

... Մենք անսահման հավատ ենք տածում և համոզված ենք, որ բանվորա-գյուղացիական Սովետական Ռուսաստանը, Կոմունիստական Ինտերնացիոնալը և քաջարի Կարմիր Բանակը անմասնակից հանդիսատեսներ չեն մնա մեր անհավասար պայքարին ընդդեմ միացյալ սև-դեղին կոնտրռևոլուցիայի, և մեզ ակտիվորեն կօգնեն ազատվելու կապիտալի իշխանությունից։

Մենք բուռն կերպով ցանկանում ենք ռուսական պրոլետարիատի հետ ձեռք ձեռքի տված մտնել ընդհանուր աշխատանքի և սոցիալիստական շինարարության նոր կյանքի մեջ։

Կեցցե Ռուսաստանյան Սովետական Սոցիալիստական Ֆեդերատիվ Ռեսպուբլիկան։

Կեցցե Բանվորա-գյուղացիական ռևոլուցիան Կովկասում։

Կեցցե 3-րդ Կոմունիստական Ինտերնացիոնալը»։[1]

Անդրկովկասում հասունանում էին ռևոլուցիոն դեպքերը։

Բաքվի բոլշևիկներն ընկեր Միկոյանի գլխավորությամբ պայքար էին կազմակերպում Բաքվի բազմազգ բանվորներին ռևոլուցիայի դրոշի տակ համախմբելու և զինված կռվի գուրս բերելու համար։

Բաքվի պրոլետարիատը 1920 թ. ապրիլի 27-ին և 28-ին դուրս եկավ զինված ապստամբության մուսավաթիստական կառավարության դեմ։

Ադրբեջանում ստեղծված ռևոլուցիոն կոմիտեն, դիմելով Մոսկվա, Լենինին, հայտնում է, որ Ադրբեջանի աշխատավորները, տապալելով մուսավաթիստական կառավարությունը, խզել են բոլոր կապերն Անտանտայի և Սովետական Ռուսաստանի բոլոր թշնամիների հետ։ Հնարավորություն չունենալով սեփական ուժերով դիմադրել ներքին և արտաքին թշնամիների կատաղի գրոհներին, Ադրբեջանի ռևոլուցիոն կոմիտեն առաջարկում է ռուսական սովետական ռեսպուբլիկային եղբայրական դաշինքի մեջ մտնել, միասին միջազգային իմպերիալիզմի դեմ պայքարելու համար։ Ադրբեջանի ռևկոմը խնդրում է Կարմիր Բանակը ուղարկել՝ Ադրբեջանի աշխատավորներին օգնելու համար։[2]

Լենինի և Ստալինի ցուցումներով Ադրբեջանի ապստամբ աշխատավորներին օգնության եկավ 11-րդ Կարմիր Բանակը ընկերներ Օրջոնիկիձեի, Կիրովի և Միկոյանի ղեկավարությամբ։ 11-րդ բանակի զորամասերը հարձակման անցան։

Ամենից առաջ գնում էր ընկ. Ծֆրեմովի գլխավորած զրահագնացքը։ Առաջինը մտնելով Բաքու, Ծֆրեմովի զրահագնացքը խանգարեց թշնամուն քաղաքից տանելու հարստությունները և ավերելու նավթային հանքահորերը։ Ծֆրեմովը պարգևատրվեց Կարմիր դրոշի շքանշանով և անվանական սրով, որի վրա արված էր հետևյալ մակագրությունը.

«Բաքուն գրավելու մասին հրամանը փայլուն կերպով կատարելու համար»։[3]

11-րդ Կարմիր Բանակի օգնությամբ Ադրբեջանի բանվորներն ու գյուղացիները տապալեցին կապիտալի լուծը և իրենց երկրում հաստատեցին սովետական իշխանություն։

Ընկ. Օրջոնիկիձեն 1936 թ. հունվարի 21-ին Կրեմլում, ադրբեջանական դելեգացիայի ընդունելության ժամանակ, ասաց.

«Մոտ 16 տարի առաջ, ընկերներ Լենինի և Ստալինի անմիջական ցուցումով, ընկերներ Կիրովը, Միկոյանը և ես, Կարմիր Բանակի հետ միասին, օգնության էինք գնում Ադրբեջանի աշխատավորներին, օգնության էինք գնում Բաքվի պրոլետարիատին, որպեսզի նրան օգնենք ազատագրվելու մուսավաթական ատելի կառավարությունից, բեգերի ու կապիտալիստների կառավարությունից, ազգամիջյան գազանային ատելության և կոտորածների կառավարությունից»։[4]

---

[1] Դիմումի տեքստը տես. Մարքսի—Էնգելսի—Լենինի Ինստիտուտի վրացական ֆիլիալի արխիվում. բոլշևիկյան պրոկլամացիաներ 1917—1921 թ. թ.)։

[2] „Известия Временного революционного комитета Азербайджана" № 1, от. 29 апреля 1920 г., стр. 1.

[3] „Боец РККА" № 220, от 12 сентября 1943 г.

[4] Г. К. Орджоникидзе. Избранные статьи и речи, стр. 469

11-րդ Կարմիր Բանակը հանդիսացավ ադրբեջանական բազմաշարշար ժողովրդի ազատարարը։ 11-րդ բանակի զորամասերի օժանդակությամբ ադրբեջանի աշխատավորներին հաջողվեց ջախջախել մուսավաթական հակառևոլուցիոն տարրերի կատաղի դիմադրությունը, ոչնչացնել կապիտալիստների, խաների, բեգերի իշխանությունը։ 11-րդ բանակի պաշտպանությամբ Ադրբեջանի աշխատավորներն սկսեցին կառուցել իրենց նոր, ազատ կյանքը։

Ընկեր Ստալինը, ժամանելով Բաքու, 1920 թ. նոյեմբերի 6-ին Բաքվի Սովետի հանդիսավոր նիստում տված իր զեկուցումն սկսում է հետևյալ խոսքերով.

«Ընկերներ, նախքան իմ զեկուցմանն անցնելը, ես կցանկանայի Ռուսաստանի Սովետների Համառուսական Կենտրոնական Գործադիր Կոմիտեի, Ժողովրդական Կոմիսարների Սովետի կողմից ողջույն հաղորդել ձեզ, Բաքվի բանվորական դեպուտատների Սովետին, Ադրբեջանի Ռևկոմին... իսկ Ռեսպուբլիկայի Ռազմռևսովետի անունից ես ջերմ ողջույն եմ հղում 11-րդ Կարմիր Բանակին, որն ազատագրել է Ադրբեջանը և իր կրծքով պաշտպանում է նրա ազատությունը»[1]

Ընկեր Ստալինի այդ ողջույնը 11-րդ Կարմիր Բանակի հրամանատարներն ու բոլոր մարտիկներն ընդունեցին որպես ամենաբարձր պարգևը և իրենց մարտական գործերի լավագույն գնահատականը։

Ադրբեջանում սովետական իշխանության հաղթանակը և 11-րդ Կարմիր Բանակի ազատագրական արշավը ռևոլուցիոն նոր վերելք առաջ բերեց Հայաստանում և խանդավառությամբ լցրեց Հայաստանի բանվորների ու գյուղացիների սրտերը։ Մայիսին Հայաստանի բանվորներն ու ռևոլուցիոն գյուղացիները ապստամբություն սկսեցին դաշնակցականների հակաժողովրդական կառավարության դեմ։ Սկսեց նոր թափով ծավալվել պայքարը Հայաստանում սովետական իշխանության համար։

Հայաստանի բանվորներն ու գյուղացիները, հանձինս Կարմիր Բանակի, տեսնում էին իրենց ազատարարներին։ Հայաստանի աշխատավորների ծոցից դուրս եկած բազմաթիվ խիզախ մարտիկներ, անցնելով սահմանը, 1920 թ. գարնանը և ամռանը մտնում էին 11-րդ Կարմիր Բանակի զորամասերը։ 1920 թ. հուլիսից այդ հայ զինվորներից Ադրբեջանի տերիտորիայում ձևավորվում են 11-րդ բանակի առաջին հայկական ստորաբաժանումները։ Հետագայում նրանց շարքերը մտան նոր մարտիկներ, և այդ ստորաբաժանումները միավորվեցին, ու կազմվեց նախ հայկական երկու գումարտակ, իսկ 1920 թ. նոյեմբերին այդ գումարտակներից կազմվեց Կարմիր Բանակի առաջին հայկական գունդը։

11-րդ բանակի կազմում գտնվող հայ զինվորները, շինել հագած այդ հայ բանվորներն ու գյուղացիները, իրենց ժողովներում բազմիցս քննել են Հայաստանի քաղաքական դրությանը վերաբերող հարցեր, ողջույն են ուղարկել ռևոլուցիոն աշխատավորներին և հայտնել իրենց պատրաստակամությունը՝ օգնելու նրանց։

[1] И. В. Сталин, Сочинения, т. IV, стр. 882.

Դեռևս 1920 թ. մայիսին, երբ Հայաստանում բռնկվեց ապստամբության բոցը, 11-րդ Կարմիր Բանակի հեծյալ ստորաբաժանումները շարժվեցին դեպի Ղազախ—Դիլիջան՝ ապստամբներին օգնելու, դաշնակների ատելի լուծը տապալելու համար։ Սակայն շուտով հայտնի դարձավ, որ Գանձակի գավառում բուն դրած մուսավաթականները հակառևոլուցիոն խռովություն են բարձրացրել Ադրբեջանի սովետական իշխանության դեմ։ Դա այն ժամանակամիջոցն էր, երբ Արևմուտքից Սովետական Ռուսաստանի վրա հարձակվում էին սպիտակ լեհերը, իսկ հարավից գեներալ Վրանգելը։ Անտանտի այդ երկու ոճրագործ ձեռքերը նոր վտանգ էին ստեղծել սովետական իշխանության համար։ Սովետական իշխանությունն իր բոլոր ուժերը նետեց Անտանտի այդ երրորդ արշավանքի դեմ։ 11-րդ Կարմիր Բանակի ստորաբաժանումները նոր խնդիր ստացան դեպի Գանձակ գնալու և օտարերկրյա իմպերիալիստների գործակալների մուսավաթական խռովությունը ճնշելու համար։

1920 թ. ամառը և աշունը Հայաստանի աշխատավորները կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ պատրաստվելով նոր զինված ապստամբության, իրենց պայքարի հաջողության գրավականը տեսնում էին ռուս մեծ ժողովրդի և նրա 11-րդ Կարմիր Բանակի օգնության մեջ։ Այդ մասին ընկ. Օրջոնիկիձեն Բաքվի Սովետի նիստում, 1920 թ. ասում է հետևյալը.

«... Հայաստանի մեզ սահմանակից գավառների գյուղացիները գոլ-զուռնայով մոտենում էին սահմաններին և ձայն տալիս՝ «Կարմիր բանակային եղբայրնե՛ր, հասել է Հայաստանում բանվորա-գյուղացիական իշխանություն հաստատելու հանդիսավոր ժամը. եկեք, օգնեցեք մեզ։ Այս պահին մեր ընկեր կոմունիստները Հայաստանում կանգնում են իշխանության գլուխ»։[1]

1920 թ. նոյեմբերին Հայաստանի բանվորներն ու գյուղացիները նորից զինված ապստամբության դուրս եկան դաշնակների իշխանությունը տապալելու և ժողովրդի իշխանություն հաստատելու համար։ 11-րդ Կարմիր Բանակի զորամասերն օգնության հասան ապստամբներին։ 1920 թ. նոյեմբերի 29-ի պատմական օրը, 11-րդ Բանակի 20-րդ դիվիզիայի 178-րդ հրաձգային գնդին տրված № 0109 հրամանում ասված է.

«Հայաստանի գյուղացիներն ու բանվորները հարյուրներով և հազարներով մոտենում են մեր սահմաններին, օգնություն են խնդրում Կարմիր Բանակից՝ ամբողջ աշխարհի բանվորների ու գյուղացիների ազատարարից։ Դեռ մայիս ամսին Հայաստանի բանվորներն ու գյուղացիները բարձրացրին սովետական իշխանության կարմիր գրոշը, բայց Սովետական Ռուսաստանի Կարմիր Բանակից անհրաժեշտ օգնություն չստանալով, Սովետական Ռուսաստանի դեմ լեհական պաների և Վրանգելի մղած պայքարի պատճառով, նրանք անհավասար պայքարում խոնարհեցրին կարմիր գրոշը, որպեսզի այն նորից բարձրացնեն այս անգամ, լիահույս լինելով մեր օգնության վրա։ Այժմ Սովետական Ռուսաստանը՝ լիակատար հաղթանակ տանելով Վրանգելի՝ միջազգային իմպերիալիզմի վերջին կամակատարի դեմ, չի կարող իր օգնությունը մերժել Հայաստանի ապստամբած բանվորական և գյուղացիական մասսաներին,

[1] „Коммунист" (Баку) № 181, от 8 декабря 1920 г.

որպեսզի մեկ անգամ ընդմիշտ վերջ դնի Անդրկովկասյան կոնտրոևոլուցիային, Հայաստանը ներգրավելով Սովետական ռեսպուբլիկաների մեծ ընտանիքի մեջ։[1]

Այդ հրամանը հանդիսանում է ռուս մեծ ժողովրդի և 11-րդ Կարմիր Բանակի կողմից հայ ժողովրդին օգնություն ցույց տալու և նրան ազատագրելու պատմական փաստաթղթերից մեկը։

11-րդ Կարմիր Բանակի զորամասերը մտան Հայաստան։ Դաշնակցականների արյունոտ տիրապետությանը վերջ տրվեց։ 11-րդ Բանակի հրամանատարը ե զինկոմը այդ օրերին մի հրամանով դիմել են բանակի շտաբներին, քաղաքական և հրամանատարական կազմին, ինչպես և վարչական մասի ամբողջ զորախմբերին։ Այդ հրամանում բանակի ղեկավարությունը սահմանում է Հայաստանի տերիտորիայում 11-րդ բանակի զորամասերի և ամեն մի զինվորի վարքագծի կանոնները։

Բացատրելով Անդրկովկասում ստեղծված իրադրությունը, Հայաստանի վիճակը, նրա դասակարգային կազմը, հրամանը հիշեցնում է 11-րդ բանակի հրամկազմին ե զինվորներին.

«... Հայաստանը... ամբողջովին գյուղացիական երկիր է, ընդսմին նաև այնպիսի մի երկիր, որը քայքայվել է արտաքին և ներքին թշնամիների դեմ յոթնամյա պատերազմի և... ազգային կոտորածների հետևանքով, որոնք կատարյալ ավերման են հասցրել հայ գյուղացիությանը»։[2]

Բացատրելով Հայաստանի և Ռուսաստանի ալյմանների միջև եղած առանձնահատկությունները, Արևելքի դռների մոտ ազատարար կարմիր մարտիկի երևալու նշանակությունը, 11-րդ բանակի հրամանատարությունը գրում է.

«Ուստի Հայաստանում տեղավորված զորամասերի վարքագիծն ու կենցաղի եղանակը պետք է լինի այնպես, որ բառացիորեն ողջ ազգաբնակությունը տոգորվի հարգանքով ու սիրով դեպի Կարմիր Բանակը, իբրև ազատության և եղբայրության մեծ գաղափարների պաշտպանը»։[3]

Այդ նպատակով առաջարկվում է զորամասերի պետերին, որ «լավագույն հարաբերություններ հաստատվեն բնակչության հետ», որ «Կարմիր բանակայիններն իրենց պահեն կորեկտ», որ «վերջ տրվի սնապարծությանը» առանձին զինվորների մոտ և զինկոմները, հրամանատարները ու մարտիկները լինեն համեստ։ Խնդիր է դրվում զինվորների առաջ «հաշվի առնել, որ սկսվում են դաշտային աշխատանքները և ազգաբնակությունը զուրկ է աշխատավոր ձեռքերից ու անասուններից, պետք է օգնել նրան դաշտերի մշակման գործում»։ Կտրական հրահանգ է տրվում Բանակի պարենավորման գծով աշխատողներին, որ բոլոր գնված մթերքների համար «վճարվի կանխիկ դրամ», խստիվ արգելելով անվճար մթերքներ վերցնելը բնակչությունից։ Պահանջվում է զորամասերի պետերից լիակատար կոնտակտ հաստատել տեղական իշխանության օրգանների հետ, ազգաբնակության մեջ կազմակերպել ագիտացիա և պրոպագանդա։ Այդ նշանավոր փաստաթուղթը վերջանում է մի կետով, որի մեջ հրամայված է.

[1] Партархив армянского филиала ИМЭЛ-а, ф. 11-ой Красной Армии, д. № 2 лл 95—96.

[2] Партархив Арм. филиала ИМЭЛ, ф. 11-ой Кр. Армии, д. № 2, л. 146

[3] Там же, лист 147.

«Զվիրավորել ազգաբնակության կրոնական ու ազգային զգացմունքները, հիշելով, որ Սովետական Հայաստանը միանգամայն անկախ է, իսկ ռուսական կարմիր զորքերը եկել են այս երկիրը՝ միայն պաշտպանելու Սովետական իշխանությունը...»[1]

Այս փաստաթուղթը ցույց է տալիս 11-րդ Կարմիր Բանակի փառապանծ ուղին Հայաստանում, նրա ազատագրական վեհ միսիան, նրա հումանիստական մեծ տրադիցիաները։ Հայ ժողովուրդը իր բազմադարյան պատմության ընթացքում այդպիսի բանակ չէր տեսել և չէր կարող տեսնել։ Հայաստանում անցյալում առհասարակ զինված մարդ երևալը ահ ու սարսափ էր առաջ բերում, որովհետև զինված բանակները սովորաբար գալիս էին Հայաստան կոտորելու և թալանելու համար։ Միայն 11-րդ Կարմիր Բանակի գալով հայ ժողովուրդը տեսավ և շփվեց մի զինված ուժի հետ, որը եկել է օգնելու ժողովրդին, որը հայ աշխատավորի թևից բռնած, նրան դուրս հանեց այն դժոխային մղձավանջից, որի մեջ նրան նետել էին դաշնակներն ու իմպերիալիստական գիշատիչները։

1920 թ. դեկտեմբերի 2-ին Երևան քաղաքում հրատարակվեց հատուկ հրաման, որով հռչակվեցին Սովետական Հայաստանի Կարմիր Բանակի հիմունքները, նշանակվեցին հրամանատարներ ու կոմիսարներ։ Այդ հրամանում ասված է.

«Բոլոր կարմիրբանակայինները սկսած մարտիկից մինչև հրամանատարը ներառյալ, պարտավոր են Կարմիր Բանակում պահպանել պարտքի գիտակից ու անձնազոհ կատարումը»։[2]

Հայ ժողովրդի լավագույն զավակները համալրեցին Կարմիր Բանակի զորամասերը և զենքը ձեռներին կանգնեցին սովետական իշխանության պաշտպանության դիրքերում։

VI

Այն ժամանակ, երբ 11-րդ Կարմիր Բանակը հաղթական ազատագրական երթով անցնում էր Ադրբեջանի ու Հայաստանի սահմանը. Թբիլիսին դարձել էր հակառևոլուցիոն ուժերի բազա։ Այնտեղ իշխում էին վրացական ժողովրդի դահիճները, մենշևիկ դավաճանները։ Թբիլիսիում Անտանտի թելադրանքով ձևավորվեցին Ադրբեջանի, Դաղստանի և Թերեքի մարզի լեռնականների բուրժուական նոր «կառավարություններ»։ Այդ «կառավարությունները» կազմված էին իրենց երկրներից փախած հակառևոլուցիոն բանդիտներից, որոնց օգնում էին մենշևիկյան Վրաստանի կապիտալիստներն ու կալվածատերերը։ Այդ «կառավարությունները» միաժամանակ հաճոյալի խաղեր էին անում թյուրքական գործակալների հետ և գրգռում թյուրք զավթիչների նվաճողական ախորժակները՝ Անդրկովկասի և ողջ Կովկասի նկատմամբ։

1920 թ. հոկտեմբերի 18-ին մենշևիկյան կառավարությունը որոշեց Բաթումի մարզը հանձնել անգլիացիներին, Վրաստանի պարտքերը ծածկելու նպատակով։ Անգլիական օկուպանտներն իսկույն գրավեցին Բաթումը, Սև ծովի արևելյան ափի ամենալավագույն նավահանգիստը։ Երբ 11-րդ Կարմիր

[1] Партархив арм. фил. ИМЭЛ. ф. 11-ой Кр. Армии, д. № 2, л. 147.
[2] Партархив арм. фил. ИМЭЛ. ф. 11-ой Кр. Армии, д. № 8, л. 84.

Բանակը մտավ Երևան, նույն օրերին ֆրանսիական «գերագույն կոմիսար Ա. Շեվալիեն եկավ Թբիլիսի, իսկ ֆրանսիական ծովակալ Դյումենիլը ժամանեց Բաթում։ Նրանց, իհարկե, ուղեկցում էին պատշաճ «արժանիքներ» ունեցող սպաներ, զինվորներ և զենք։ Անտանտի գեներալներից մեկը 1920 թ. դեկտեմբերի 16-ին վրացական հեղափոխական գործակալության ներկայացուցչին տված ինտերվյուի մեջ պահանջում է տապալել սովետական իշխանությունը Հայաստանում և Ադրբեջանում, կանգնեցնել 11-րդ բանակի շարժումը դեպի Վրաստան։ Գեներալը հանդիսավոր խոստում տվեց զորքով, զենքով և ամեն բանով օգնել մենշևիկներին ու բուրժուական մյուս նորաստեղծ «կառավարություններին» սովետական իշխանության դեմ մղվող պայքարում։

Այդ փաստը նշանակում էր Անտանտի նոր արշավանք սովետական իշխանության դեմ։ 1920 թ. նոյեմբերի 30-ին ընկեր Ստալինը „Правда"-ի թղթակցի հետ ունեցած զրույցի մեջ հետևյալ կերպ է բնորոշում Կովկասի դրությունը և Անտանտի բաղարականությունը.

«Ռևոլուցիայի համար Կովկասի կարևոր նշանակությունը ոչ միայն նրանով է որոշվում, որ նա հումքի, վառելիքի և պարենի աղբյուր է հանդիսանում, այլև իր դիրքով Եվրոպայի ու Ասիայի միջև, մասնավորապես Ռուսաստանի ու Թյուրքիայի միջև, և տնտեսական ու ստրատեգիական կարևորագույն ճանապարհների (Բաթում—Բաքու, Բաթում—Թավրիզ, Բաթում—Թավրիզ—Էրզրում) առկայությամբ։

Այս բոլորը հաշվի է առնում Անտանտը, որն այժմ տիրապետելով Կոստանդնուպոլսին, Սև ծովի այդ բանալուն, կցանկանար պահպանել Անդրկովկասի վրայով դեպի Արևելք տանող ուղիղ ճանապարհը։

Ով վերջի-վերջո կհաստատվի Կովկասում, ով կօգտվի նավթից և դեպի Ասիայի խորքը տանող ամենամարևորագույն ճանապարհներից, ռևոլուցիան թե Անտանտը,— այս է ամբողջ հարցը։

Ադրբեջանի ազատագրումն զգալի չափով թուլացրեց Անտանտի դիրքը Կովկասում։ Անտանտի դեմ Թյուրքիայի մղած պայքարը նույն հետևանքներին հասցրեց։ Այնուամենայնիվ, Անտանտը չի վհատվում և հյուսում է նոր ուսայներ Կովկասում։

Թիֆլիսը կոնտրռևոլուցիոն աշխատանքի բազա դարձնելը, Ադրբեջանի, Դաղստանի և Թերեքի մարզի լեռնականների բուրժուական կառավարություններ կազմելը, իհարկե, Անտանտի միջոցներով և բուրժուական Վրաստանի օգնությամբ, սիրախաղը բեմալիստների հետ և Թյուրքիայի պրոտեկտորատի տակ կովկասյան ժողովուրդների ֆեդերացիա կազմելու իզեաների քարոզը, Անտանտի ասված մինիստրական ապարատը Պարսկաստանում, և Պարսկաստանի ոգողումը սիպայիներով,— այս բոլորը և նման շատ բաներ վկայում են, որ Անտանտի հին գայլերը քնած չեն։ Անկասկած է, որ Անտանտի ագենտների աշխատանքն այդ ուղղությամբ կգալիսին ուժեղացել ու ահագին բնույթ է ընդունել Վրանգելի ջախջախումից հետո։[1]

Անտանտի գործակալների տենդային գործունեությունը Վրաստանում չհասցրեց իմպերիալիստների ցանկացած արդյունքին։ Անտանտի ծրագրերը Կովկասում և Վրաստանում լիակատար ձախողման ենթարկվեցին։

[1] И. В. Сталин. Сочинения, т. IV, стр. 403—404.

Վրաստանի բանվորներն ու գյուղացիները ուշի-ուշով հետևում էին, թե ինչ է կատարվում սովետական կարգեր հաստատված Ռուսաստանում, Արրբեջանում և Հայաստանում։ Նրանք ավելի սեղմ էին համախմբվում բոլշևիկների պարտիայի դրոշի ներքո։

ՌԿ(բ) Պ Կովկասյան Բյուրոն և Վրաստանի կոմունիստական (բոլշևիկների) պարտիան 1921 թ. հունվարին որոշում ընդունեցին զինված ապստամբություն սկսելու և վրացական մենշևիկների իշխանությունը տապալելու համար։ 1921 թ. փետրվարի 11-ի լույս 12-ի գիշերը Բորչալուի և Լոռվա աշխատավորները սկսեցին զինված ապստամբությունը։ Ապստամբները մի կոչով դիմեցին ամբողջ Վրաստանի բանվորներին, գյուղացիներին և զինվորներին. այդ կոչում ասված է.

«Վրաստանի բանվորներ և գյուղացիներ, օրինակ վերցրեք մեզնից. իշխանությունը վերցրեք ձեր ձեռքը։ Վրացական կառավարությունը չի հրաժարվում ողորմություններով մթագնված ու հարբեցած ժողովրդական գվարդիականների ձեռքով մեզ խեղդելու մտքից։ Վրաստանի գյուղացիներ և բանվոր երկաթուղայիններ, Ձեր սրբազան պարտքն է խանգարել ձեր եղբայրներին խեղդելու այդ նողկալի փորձերը։ Թույլ մի տվեք, որ ժողովրդական գվարդիականներն անցնեն մեր գյուղերով, մի փոխադրեք ժողովրդական գվարդիաներին՝ ճնշելու ապստամբությունը. մենք արդեն նվաճել ենք ազատությունը. մենշևիկներին ու գեներալներին թույլ մի տվեք այն խլելու մեր ձեռքից»։

Վրաստանի բանվորներն ու գյուղացիները զինված ելույթներով պատասխանեցին իրենց եղբայրների այդ կոչին։

Լենինի և Ստալինի ցուցումներով 11-րդ Կարմիր Բանակը Ս. Օրջոնիկիձեի և Ս. Կիրովի ղեկավարությամբ անմիջապես օգնության գնաց Վրաստանի ապստամբ բանվորներին ու գյուղացիներին։ 11-րդ Կարմիր Բանակը անցավ իր փառապանծ ուղու մի նոր էտապ, Վրաստանի ազատագրման էտապ։ Վրաստանի բանվորներն ու գյուղացիները ողջունում էին եղբայրական օգնության եկած կարմիր զորքերին։ Փետրվարի 16-ին Շուլավերում (այժմ Շահումյան) ձևավորվեց ռևոլյուցիոն կոմիտե, որը Վրաստանը հայտարարեց Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկա։ Ապստամբության ալիքը տարածվեց Վրաստանի քաղաքներում ու գյուղերում։ Վրաստանի բազմաթիվ քաջարի դասակներ մտնում էին 11-րդ Կարմիր Բանակի զորամասերի մեջ և նրանց հետ մարտնչում հայրենի հողի ազատագրման համար։

1921 թ. փետրվարի 25-ին 11-րդ Կարմիր Բանակը և ապստամբները մտան Թբիլիսի, այնտեղից դուրս վռնդելով մենշևիկներին։ Ընկեր Օրջոնիկիձեն այդ օրը հեռագրեց Լենինին և Ստալինին.

«Թբիլիսի մոտ ծածանվում է Սովետական իշխանության կարմիր դրոշը։ Կեցցե Սովետական Վրաստանը»։

11-րդ Կարմիր Բանակը շարունակեց իր ազատագրական պայքարը։ Նա ազատագրեց արևմտյան Վրաստանի աշխատավորներին, օսերին, աջարներին, աբխազներին և հաղթական քայլերով անցավ մինչև Սև ծովի ափերը։

[1] Г. В. Хизануридзе, Большевики Грузии в боях за советскую власть. Огиз. 1947 г., стр. 233.

[2] Г. К. Орджоникидзе Избранные статьи и речи. стр. 96

Մենշևիկյան կառավարությունը, հաղթահարելով վրացական պետական հարստությունները, փախել էր Բաթումի։ 11-րդ Կարմիր Բանակը կրնկակոխ հետապնդում էր մենշևիկյան մինիստրներին։ 1921 թ. մարտի 17-ի 18-ի լույս գիշերը, գաղտագողի կերպով, թյուրքական ասկյարների պաշտպանության տակ մենշևիկյան կառավարության անդամները բարձրացան իտալական «Ֆերեն Ժոզեֆ-Միրիլլի» շոգենավը և ֆրանսիական ականակրի պաշտպանությամբ փախան Կոնստանդնուպոլիս։

11-րդ Կարմիր Բանակը 1921 թ. մարտի 18-ին հաղթականորեն մտավ Բաթումի, որտեղ կարմիր զինվորներին ողջունեցին Աջարիայի բանվորներն ու գյուղացիները։

11-րդ Կարմիր Բանակի օժանդակությամբ Սովետական իշխանությունը հաստատվեց Հյուսիսային Կովկասում, Ադրբեջանում, Հայաստանում, Վրաստանում։ Կովկասի հպարտ լեռները և հարստությունները դարձան ազատ, իրենց իսկական տերերի, բանվորների ու գյուղացիների համար։ 11-րդ Կարմիր Բանակը ազգային խաղաղություն բերեց Կովկասի ժողովուրդներին, նրանց մեջ ստեղծեց եղբայրություն, համագործակցություն։

Այսպես ավարտվեց 11-րդ Կարմիր Բանակի փառապանծ ուղին Վոլգայի գետաբերանից, Հյուսիսային Կովկասով, Անդրկովկասով, մինչև Սև ծովի ափերը։

VII

Հայաստանում սովետական կարգերի հաստատումով չավարտվեց պայքարը օտար զավթիչների և ներքին հակահեղափոխության դեմ։ Հակահեղափոխությունը բուրժուազիան կատաղի կերպով դիմադրում էր սովետական կարգերի հաստատմանը և օգնության էր կանչում թյուրքական, անգլո-ֆրանսիական, ամերիկյան իմպերիալիստներին։

Հայ ժողովրդի իսկական բարեկամը և պաշտպանը հանդիսացավ ռուս մեծ ժողովուրդը և նրա փառապանծ Կարմիր Բանակը։ Լենինի և Ստալինի ղեկավարությամբ հարաճուն օգնություն է կազմակերպվում հայ ժողովրդին։ Ընկեր Ս. Օրջոնիկիձեն այդ օրերին դիմելով հայ ժողովրդին, ասել է.

«Հայաստանի բանվորներն ու գյուղացիները թող գիտենան, որ Սովետական Ռուսաստանի բոլոր ուժերը և հոանդը տրամադրված են Սովետական Հայաստանին սպասարկելու համար և որ Ռուսաստանի բանվորներն ու Կարմիր Բանակը իրենց հացի աղքատիկ պաշարը կբաժանեն Հայաստանի բանվորների և գյուղացիների հետ»։[1]

1920 թ. վերջերից և 1921 թ. սկզբներից Ռուսաստանից և Ադրբեջանից դեպի Հայաստան էին ուղարկվում անհրաժեշտ շատ մթերքներ, վառելիք, ապրանքներ, սովահար հայ ժողովրդին օգնելու համար։ Վ. Ի. Լենինի ցուցումով Ռուսաստանի Սովետական կառավարությունը 1920 թ. դեկտեմբերին ընկեր Ասքանազ Մռավյանի միջոցով Հայաստան ուղարկեց երկու միլիարդ ռուբլի սովետական դրամ։ Ռուսաստանից և Բաքվից Հայաստան ուղարկվող հացի, հագուստեղենի, վառելիքի և այլ մթերքների ու ապրանքների տրանսպորտներին ուղեկցում և Հայաստանի աշխատավորներին էին հանձնում 11-րդ Կարմիր Բանակի մարտիկները։ Դաշնակների լծից ազատագրված հայ ժողո-

[1] «Կոմունիստ» № 4, դեկտեմբերի 9, 1920 թ.։

վուրդը ուշքի էր գալիս և սկսում կառուցել իր ազատ, սովետական նոր կյանքը։

Թյուրքերը, սակայն, Հայաստանում սովետական կարգեր հաստատելուց հետո, ոչ միայն չհրաժարվեցին Հայաստանը զավթելու և հայ ժողովրդին բնաջնջելու իրենց վաղեմի ծրագրից, այլև ավելի մոլի կատաղությամբ սկսեցին հարձակվել Սովետական Հայաստանի վրա։ Թյուրքական բռնադատիչներն սկսեցին օկուպացնել հենց նոր ծնված Սովետական Հայաստանի տերիտորիաները, թալանել Հայաստանի քաղաքներն ու գյուղերը, բնաջինջ անել բազմահազար ժողովուրդը։

Օկուպացված տերիտորիաների բնակչությունը փախչում էր դեպի 11-րդ Կարմիր Բանակի կանգնած սովետական շրջանները և փրկում իր կյանքը, իսկ բնակչության այն մասը, որ մնում էր Թյուրքական զորքի գրաված տերիտորիայում, ենթարկվում էր բեմալիստների բարբարոսական խոշտանգումներին։

1921 թ. սկզբներին փախստական հայերի մի հոծ բազմություն Վլադիկավկազ քաղաքում հավաքվելով միտինգի, լսում է հաղորդում Հայաստանում Թյուրքական օկուպանտների կատարած գազանությունների մասին և հատուկ հեռագիր է ուղարկում Լենինին ու Ստալինին։ Ահա այդ հեռագրի տեքստը

«Հեռագիր.

Մոսկվա, Ժողկոմսովետի Նախագահ Լենինին.

Պատճեն՝ Ազգությունների Ժողկոմ Ստալինին.

Մենք, փախստական հայերս, խորը ուրախության զգացումով ողջունեցինք Սովետական իշխանության հաստատումը Հայաստանում։ Մենք հավատում էինք, որ հասավ ժամանակը, երբ իր բոլոր ներքին թշնամիներին հաղթած Ռուսաստանը իր հզոր ձեռքը կմեկնի օգնելու բազմատանջ հայ աշխատավոր ժողովրդին, որը ներգրավվել է պատերազմի մեջ Քեմալի դեմ և ուժասպառ է լինում անհավասար, ծանր պայքարում։ Մենք հավատում էինք, որ հենց միայն Հայաստանում Սովետական իշխանության հաստատման փաստը ուշքի կբերի Քեմալին, քանի որ մենք հավատում էինք Քեմալի հայտարարություններին և թերթերի հավաստիացումներին, թե Քեմալը կռվում է դաշնակցական կառավարության, և ոչ հայ աշխատավոր ժողովրդի դեմ։ Սակայն, հետագայում ստացված հաղորդագրությունները խորտակեցին մեր հավատը Քեմալի խաղաղասիրության նկատմամբ, կործանվում են մեր հույսերը Սովետական Հայաստանի լավագույն ապագայի նկատմամբ, որովհետև Քեմալը ուժեղ տեմպերով ավերում է այժմ արդեն Սովետական Հայաստանը, թալանում է աղքատացած գյուղացիների վերջին ունեցվածքը, վիթխարի կոնտրիբուցիաներ է դնում, ամբողջ աշխատունակ բնակչությունը բռնությամբ հավաքում և քշում է էրզրում տաժանակիր աշխատանքի, իսկ Հայաստանի սովետական հիմնարկներին բոլորովին հաշվի չի առնում և արհամարհում է նրանց։ Որքրի նման դրությունը այլևս շարունակվել չի կարող, քանի որ սպառնում է վերջնականապես քայքայել և կործանել Սովետական Հայաստանը։ Այժմ, ինչպես և միշտ, հայերի բոլոր հայացքներն ուղղված են Ռուսաստանին, և մենք, հազարավոր հայ փախստականներս, հավաքվելով միտինգի Վլադիկավկազում, մեծ հույսով նայում ենք Ռուսաստանի Բանվորա-Գյուղացիական կառավարությանը և

սպասում նրա հզոր ու վճռական քայլին, որը կարող է խելքի բերել Քեմալին և փրկել Սովետական Հայաստանը հետագա ավերումներից։

Միտինգի նախագահ (ստորագրություն)

Քարտուղար (ստորագրություն)»[1]

Այդ հեռագիրը միակ փաստաթուղթը չէ։ Կարելի է բերել Հայաստանի աշխատավորների կողմից Լենինին և Ստալինին ուղարկված, Կարմիր Բանակի հրամանատարությանը հասցեագրված շատ դիմումներ, հեռագրեր, նամակներ, որոնց մեջ հայ ժողովուրդը խնդրում է օգնություն կազմակերպել, փրկել երիտասարդ սովետական ռեսպուբլիկան, Հայաստանից դուրս վռնդել թյուրք օկուպանտներին։

Ռուսաստանի Սովետական կառավարությունը պատասխան մի հեռագրի մեջ Սովետական Հայաստանի կառավարությանը հայտնել է հետևյալը.

«Ռուսաստանի Սովետական կառավարությունը խորին հուզմունքով իմացավ Հայաստանի եղբայրական Սովետական Ռեսպուբլիկայի և մասնավորապես նրա օկուպացված մասերի ծանր դրության մասին։ Մեզ խիստ հուզեց և տխրեցրեց Ալեքսանդրոպոլի շրջակայքում օկուպացիոն զորքերի կատարած էքսցեսների լուրը և Ալեքսանդրապոլի Ռևկոսի ծանր վիճակը։ Մենք արդեն այդ առթիվ հայտարարություն ներկայացրել ենք թյուրքական կառավարությանը և ամենալճռական ձևով պնդելու ենք փոխելու թյուրքական իշխանությունների վերաբերմունքը Հայաստանի եղբայրական Սովետական Ռեսպուբլիկայի նկատմամբ։ Սովետական Հայաստանի հետ կապի անջավարարությունը ծանր է անդրադառնում նրա նկատմամբ մեր քաղաքականությունը, Բանվորա-Գյուղացիական Սովետական Ռեսպուբլիկաների լիակատար համերաշխությունը կենսագործելու և բազմակողմանի օգնություն ու ամեն կողմով օժանդակություն ցույց տալու վրա։ Կանենք այն բոլորը, ինչ որ ի վիճակի ենք, որպեսզի ավելի սերտ կապ ստեղծենք Հայկական ռեսպուբլիկայի հետ և անհրաժեշտ օգնություն ցույց տանք Սովետական Հայաստանի եղբայրական աշխատավորական մասսաներին։

№ 3041. Արտգործժողկոմ Չիչերին»։[2]

11-րդ Կարմիր Բանակը օգնության է հասնում Սովետական Հայաստանին և հայկական Կարմիր Բանակին։ 11-րդ Կարմիր Բանակի շտաբի պետը և Զինվորական կոմիսարը 1921 թ. փետրվարի 16-ին Հայկական կարմիր զորքերի հրամանատարությանն ուղարկած ծածկագիր հեռագրում վերլուծում են Հայաստանում ստեղծված իրադրությունը և ցուցումներ են տալիս համատեղ գործելու, Հայաստանի թշնամիներից ռեսպուբլիկան պաշտպանելու մասին։ Այդ հեռագիրը ցույց է տալիս, թե ինչպես 11-րդ Կարմիր Բանակի զորամասերը հայկական Կարմիր Բանակի հետ փոխգործողությամբ կռվում էին թշնամիների դեմ և պաշտպանում Սովետական Հայաստանը։[3]

11-րդ Կարմիր Բանակի օգնությամբ Հայաստանը ազատագրվեց օկուպանտների լծից։ 11-րդ Կարմիր Բանակի օգնությամբ Հայաստանի բանվոր-

---

[1] Հայկական ՍՍՌ պետ. կենտ. արխիվ. Ֆ 40—114, գ. 3. թ. 34.

[2] Հայկական ՍՍՌ պետ. կենտ. արխիվ. Ֆ 40—114, գ. 16. թ. 57.

[3] Մարքսի-Էնգելսի-Լենինի Ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվ. 11-րդ Կարմիր Բանակի ֆոնդ, գ. 3.

ներն ու գյուղացիները ջախջախեցին հակառևոլուցիոն բուրժուազիայի դիմադրությունը, դաշնակցականների ավանտյուրիստական բոլոր փորձերն իրենց կորցրած տիրապետությունը վերականգնելու համար։

11-րդ Կարմիր Բանակը և Հայաստանի Կարմիր Բանակը պաշտպանեցին Սովետական Հայաստանի անկախությունը, ազատությունը և հնարավորություն տվեցին ամրապնդելու սովետական կարգը։

* * *

Այսպիսով, ամփոփելով շարադրված նյութը, կարելի է հանգել հետևյալ եզրակացություններին.

11-րդ Կարմիր Բանակը ստեղծվեց 1918 թվականին, Հյուսիսային Կովկասում, քաղաքացիական կռիվների բոցերի մեջ. այդ բանակը հերոսական շատ մարտեր մղեց դենիկինյան սպիտակ բանդաների դեմ և իր վրա գրավելով Դենիկինի զորքերի մի զգալի մասը, ծանր պարտություններ մատնեց նրանց։

11-րդ Կարմիր Բանակն ստեղծվեց Լենինի և Ստալինի անմիջական ցուցումներով, Գ. Կ. Օրջոնիկիձեի և Ս. Մ. Կիրովի ղեկավարությամբ։ Ինչպես Կարմիր Բանակի մյուս միավորումները, այնպես էլ 11-րդ Կարմիր Բանակը հանդիսանում են Լենինի—Ստալինի պարտիայի զավակ։ Բոլշևիկյան պարտիան ստեղծեց այդ բանակը, իր լավագույն զավակներին ուղարկեց նրա շարքերը. բոլշևիկյան պարտիայի անդամները և զինվորական կոմիսարները հանդիսանում էին 11-րդ բանակի ողնաշարը, կոփում էին զորամասերի մարտունակությունը, կազմակերպում էին բանակի հաղթանակները։

11-րդ Կարմիր Բանակը փառապանծ ուղի անցավ Վոլգայի գետաբերանից—Աստրախան—Ցարիցին բնագծից սկսած, Ստավրոպոլի և կալմիկական տափաստաններով, Հյուսիսային Կովկասի աուլներով ու Կովկասի նախալեռներով, հետապնդեց և մարտերում ջախջախեց սպիտակ գվարդիական բանակներին, օգնեց Հյուսիսային Կովկասի ժողովուրդներին դեն նետելու կապիտալի լուծը, ազատագրվելու շահագործումից։

11-րդ Կարմիր Բանակը հանդիսանում է Անդրկովկասի ժողովուրդների ազատարարը։ Կարմիր Բանակը ոչ թե Անդրկովկաս եկավ նվաճողական նպատակներով, ինչպես ճչում էին Անտանտի իմպերիալիստները և թյուրք զավթիչներն ու նրանց մենշևիկ, դաշնակցական և մուսավաթ գործակալները, այլ Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի ժողովուրդների խնդրանքով, այդ ժողովուրդներին իրենց թշնամիների դեմ մղվող անհավասար ծանր մարտերում օգնելու, նրանց ազատագրելու, նրանց ազգային անկախություն տալու. նրանց պետականությունը վերականգնելու նպատակով։ Առանց 11-րդ Կարմիր Բանակի ակտիվ օգնության, Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի աշխատավորների ռևոլուցիոն շարժումները և հերոսական պայքարն իրենց երկրների բուրժուա-կալվածատիրական դասակարգերի և օտար զավթիչների դեմ, չէին կարող վերջնականապես պսակվել հաջողությամբ։ Առանց 11-րդ Կարմիր Բանակի օգնության, Անդրկովկասի ժողովուրդները չէին կարող ազատագրվել իմպերիալիստական գաղութարարներից։

11-րդ Կարմիր Բանակը հանդիսացավ բազմազգ ժողովուրդների եղբայրության բանակը, Անդրկովկասի ժողովուրդների միջև խաղաղության և բա-

բեկամության դրոշակակիրը, նացիոնալիզմի և ազգային թշնամանքի դեմ պայքարող մեծ ուժը, ինտերնացիոնալիզմի գաղափարների պաշտպանը։

11-րդ Կարմիր Բանակի տրադիցիաներն անթառամ են։ Այդ պանծալի տրադիցիաների ոգով այսօր դաստիարակվում են Սովետական բանակի ռազմիկները, սովետական հայրենասեր ժողովուրդները։ 11-րդ Կարմիր Բանակի ուղին ամբողջ Կովկասում— Վոլգայի գետաբերանից մինչև Դոնի և Կուբանի ափերը, Քուռի և Արաքսի հովիտները, Կասպից ծովից մինչև Սև ծովի ափերը, Ստավրոպոլի տափաստաններից մինչև Թամանի լեռները, Կովկասյան լեռնաշղթայի լեռնանցքներից մինչև Ալագյազի ստորոտները և Զանգեզուրի լեռնաշխարհը— զարդարված է անթառամ փառքով։ Այդ բանակը ոսկետառ հերոսական էջեր է գրել Կովկասի ժողովուրդների ազատագրական պայքարի պատմության մեջ։